ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՎՈԼՈԴԻԱՅԻ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Մ.Գ.Թ. դոցենտ
Արտակ Ստեփանյան

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ուսուցչի մասնագիտական գործունեությունը վերջին տարիներին զգալի փոփոխություն է կրել: Կրթության ժամանակակից շատ հիմնախնդիրներ («Կրթություն ամբողջ կյանքի համար» սկզբունքից անցում «Կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» սկզբունքի) այսօր ուղղակիորեն կապված են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հետ: Սակայն դա չի նշանակում, որ դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցների առկայությունը ինքնըստինքյան բերում է մասնագիտական վարպետության և կրթության որակի աճի: Ուսուցիչներին դպրոցի տեղեկայնացման գործընթաց ներառելն ընթանում է ոչ այնպիսի արագ տեմպերով, ինչպես աճում է մանկավարժական իրազեկության համակազմի և որակավորման պահանջների մակարդակը: Տվյալ իրավիճակում անհրաժեշտ է գտնել մի շարք հարցերի պատասխաններ. ինչո՞ւ է այսքան դժվար և դանդաղ ընթանում դպրոցում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, ինչո՞վ է պայմանավորված իրենց մասնագիտական գործունեությունում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործելու ուսուցիչների ցանկությունը կամ դժկամությունը, ի՞նչ շարժառիթներով են նրանք առաջնորդվում, ի՞նչ խնդիր պետք է լուծել մանկավարժական կադրերի տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիշենք 80-90-ական թվականները՝ ինչ պլաններ էին կազմվում, և ինչ հեռանկարներ էին բացվում դպրոցում «Ինֆորմատիկա» առարկա մտցնելիս, ինչ խանդավառությամբ էինք խոսում համակարգչային համընդանուր ուսուցման մասին: Մենք երջանիկ էինք Կոնվերտներից և Քվանթներից, իսկ եթե դպրոցում կար էլեկտրոնային փոստ՝ ցածր արագությամբ մոդեմով՝ հիացմունքին չափ չկար: Անցավ 30 տարի ի՞նչը փոխվեց: Այսօր համակարգիչների հնարավորությունները բարձրացան մի քանի անգամով, ստեղծվեցին նոր դասընթացներ, իսկ արդյունքնե՞րը: Վերջիններս ավելացան բոլորովին ոչ այն համաչափությամբ, որքանով ավելացավ ժամանակակից համակարգիչների հզորություն, և ինչպիսին էր ուսուցիչների զանգվածային պատրաստությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Եվ հիմնախնդիրները մնացին նույնը:

Ներկա ժամանակաշրջանում կրթության վերակառուցման գործընթացը համաչափ չէ հասարակության տեղեկայնացման տեմպերի հետ: Գործնականում բավականին արագ է տեղի ունենում կրթական համակարգի ուսումնամեթոդական, գիտամանկավարժական, գիտահետազոտական, ինչպես նաև ծրագրային ապահովման և կրթական այլ ռեսուրսների հնացումը: Այդ իսկ պատճառով կրթության համակարգում պետք է ճիշտ ժամանակին կիրառվեն ոչ միայն

տեղեկատվական-կրթական ժամանակակից նյութեր, այլև տեխնոլոգիաներ, որոնք արագ արձագանքում են նոր ձևավորվող մասնագիտությունների շուկայի պահանջներին {49,52}:

Ժամանակակից կրթական խնդիրների լուծման համար իրենց ուրույն տեղն ունեն համակարգչային տեխնոլոգիաները, որոնք սկսում են ներդրվել հանրակրթական դպրոցների տարբեր առարկաների դասավանդման գործընթացում {25,31,41,53}:

Սակայն նույնը չի կարելի ասել հանրակրթական դպրոցում դասավանդվող «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի վերաբերյալ: Ակնառու է, որ նշված առարկայի դասավանդման գործընթացում կիրառվող ավանդական մոդելը ոչ միշտ է համապատասխանում արդի պահանջներին: Ժամանակն է ֆիզիկական կուլտուրայի դասավանդման գործընթացում որոնել և ներդնել նոր ուղիներ, որոնք հիմնավորվում են կրթական համակարգի նոր հայեցակարգերի և դասավանդման նորահայտ մոդելների ձևավորմամբ ու ներդրմամբ, որոնք հիմնված են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վրա {12,36,19}:

Կրթական պարագիդմայի (հարացույցի) կատարելագործումը բերում է ֆիզիկական կուլտուրայի կարգավիճակի փոփոխման՝ որպես հումանիտար ուսումնական առարկայի: Սրանով է պայմանավորված ֆիզկուլտուրային կրթության բովանդակության արդիականացումը և դրանով հանդերձ էականորեն փոխվում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի դիրքը, նրա պրոֆեսիոնալ անձնային հմտությունների վերաբերյալ առկա հայացքը՝ պահանջելով վերաիմաստավորել և վերակառուցել նրա պրոֆեսիոնալ գործունեության բնույթը {6,7,13,20}:

Նման պարագայում ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը դառնում է ֆիզկուլտուրային կրթության արդիականացված բովանդակության կրողը, մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանների կազմակերպիչը: Ֆիզկուլտուրային կրթության բովանդակության հիմնական մոդերնիզացնողը համարվում է մանկավարժը, հատկապես նրա պրոֆեսիոնալիզմը և կոմպետենտությունը կարող են ապահովել անհրաժեշտ արդյունքների ձեռք բերումը: Այսպիսով, ֆիզիկական կուլտուրայի ոլորտում ուսումնադաստիարակչական գործընթացի արդիականացման առաջնային դերը պատկանում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին {8,11,37}:

Միևնույն ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը լայն հնարավորություն է ընձեռում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի գիտամեթոդական գործունեության ընթացքում նոր տեխնոլոգիաների կիրառման համար: Ներկա ժամանակաշրջանում համակարգչի հետ աշխատելու և այն գործունեության տարբեր ոլորտներում կիրառելու կարողությունը յուրաքանչյուր մասնագետի համար դառնում է պարտադիր պայման {44}:

Օրինակ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում աշխատող յուրաքանչյուր մասնագետ բախվում է ֆիզիկական վարժություններով զբաղվողների առողջական վիճակի, ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական, ֆունկցիոնալ և հոգեբանական պատրաստության ախտորոշման անհրաժեշտության հետ: Մարզվողների պատրաստության տարբեր կողմերի ախտորոշումն անհրաժեշտ է ֆիզկուլտ-մարզական և առողջարարական գործունեության հաջող կառուցման և ղեկավարման համար: Հայտնի է, որ ֆիզկուլտուրային առողջարարական կանոնավոր պարապմունքների դեպքում մարդու օրգանիզմում տեղի են ունենում ադապտացված փոփոխություններ: Օրգանիզմում տեղի ունեցող փոփոխություններն հնարավորություն է տալիս ոչ միայն եզրահանգումներ կատարել մարզվողների վիճակի մասին, այլ նաև գնահատել պատրաստության առանձին կողմերի ձևավորման համար կիրառվող միջոցների արդյունավետությունը, հնարավորություններ է բացվում ֆիզկուլտ-մարզական և առողջարարական գործունեության ղեկավարման համար: Այս բոլորի հետ կապված ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական աշխատանքում առավել լայն տարածում են ստանում աշակերտների ֆիզիկական վիճակի օբյեկտիվ հսկման և գնահատման տարատեսակ մեթոդներ տարբեր թեստերի օգնությամբ, որոնց արդյունքները պահանջում են համապատասխան մշակումներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների տեղեկատվական-հաղորդակցական կոմպետենտության մակարդակը և հիմնավորել ձևավորման ուղիները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՑԵԼ.

- ժամանակակից կրթության արժեքները և նպատակները {33,45,47,48 և այլոք},
- ուսուցչի պատրաստության կոմպետենտային գաղափարները, նրա մասնագիտական կոմպետենտության ձևավորումը {32,39,40 և այլք },
- ֆիզիկական կուլտուրայի ոլորտի մասնագետների մասնագիտական պատրաստության արդիականացման գաղափարները {15,35,42 և այլք}:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Նպատակի իրագործման և վարկածի ստուգման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական գործունեությունում նորարարությունների ինտեգրման գործընթացը,
2. բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակը,
3. բացահայտել ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների կարծիքը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում համակարգչի կիրառման վերաբերյալ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Առաջադրված խնդիրների իրագործման համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. Հետազոտության հիմնախնդրին վերաբերող տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրում, վերլուծում և ընդհանրացում:
2. Մանկավարժական դիտումներ:
3. Սոցիոլոգիական հարցում:
4. Մաթեմատիկական վիճակագրություն:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական մոդելը

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական աշխատանքը բարդ և բազմապրոֆիլ է: Ուսուցիչը ինքը պետք է լինի ֆիզիկապես բազմակողմանի պատրաստված (լինի բարեկազմ, ձգված, կոկիկ հագնված), գիտենա ֆիզիկական վարժությունների կատարման տեսությունը և պրակտիկան, տիրապետի ուսուցման մեթոդիկային:

Ժամանակակից ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է իմանա.

- ֆիզիկական կուլտուրայի նպատակները և խնդիրները,
- առարկայի գիտական բովանդակության ընդհանուր հայեցակարգը,
- քաղաքում, մարզում, հանրապետությունում և արտասահմանում ֆիզիկական կուլտուրայի արդի վիճակը,
- «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի տեղը և դերը դպրոցական ծրագրի այլ առարկաների շարքում,
- միջառարկայական կապերը,
- առաջավոր մանկավարժական փորձ և կարողանա ներդնել այն իր աշխատանքում:

Ֆիզիկական դաստիարակության պարապմունքների բովանդակության ուղղվածությունը պետք է լուծի կրթական, դաստիարակչական, առողջարարական, մարզումային և մրցակցական խնդիրներ: Այդ խնդիրների լուծումը շատ ձևերով կախված է ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունից, նրա ֆիզիկական պատրաստվածության մակարդակից, կազմակերպչական կարողություններից, բարոյական, գեղագիտական, խոսքի, հաղորդակցական կուլտուրայից, դիդակտիկ հնարավորություններից: Նա պետք է վերլուծի ֆիզիկական կուլտուրայի հարցերով գիտական և տեսական հրատարակումները, կոլեգաների հետ կիսի աշխատանքային փորձը, ունենա մեթոդական մշակումներ և կատարելագործված, փորձարարական ծրագրեր: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է տիրապետի ինքնավերլուծությանը և դասի վերլուծությանը, կարողանա անցկացնել դրանք բարդեցված պայմաններում, ուսումնամարզական գործընթացում ներդնի նորարարություններ, հայտնագործություններ, անցկացնի ցուցադրական դասեր, մշակի թեստավորման և տնային առաջադրանքներ սովորողների համար:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական գործունեության առանձնահատկություններից է իր գործունեության կապը երեխաների դաստիարակության հետ: Ուսուցիչը մանկական հոգու գիտակ է: Նա պետք է իր գործին տիրապետելով մոտենա աշակերտներին, հասկանա տարիքային առանձնահատկությունները, իմանա ապագա քաղաքացու անձի ձևավորման, դաստիարակման ուղիները: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը, ի տարբերություն այլ

ուսուցիչների, երեխաների հետ անցկացնում է ավելի շատ ժամանակ, դրա համար նա կարող է աշակերտի մոտ բացահայտել այն, ինչ ուրիշների համար փակ է մնում: Ուսուցիչը պետք է սովորողների մոտ ձևավորի և զարգացնի սոցիալական ակտիվություն, օգնի բացահայտելու նրանց հնարավորությունները: Ֆիզիկական կուլտուրայի բնագավառում լուծվում են անձի ներդաշնակ զարգացման և առողջ ապրելակերպի ձևավորման ընդհանուր մանկավարժական խնդիրներ: Մանկավարժի անձնական օրինակը շատ ձևերով օժանդակում է երեխայի անձի ձևավորմանը: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է հիմնվի երեխաների, նրանց ծնողների, կոլեգաների հետ համագործակցության մանկավարժության վրա: Ուսուցչի պարտքն է երեխայի մեջ բացահայտել դրական որակներ և օժանդակի դրանց զարգացմանը, թույլ աշակերտներին օգնի հավատալու իրենց ուժերին, երեխային սովորեցնի աշխատելու ֆիզիկական կուլտուրայի դասերին, տանը՝ իր ֆիզիկական և բարոյահոգեբանական ընդունակությունների զարգացման վրա: Դրա համար ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է սերտ կապ պահպանի ծնողների հետ, անընդհատ տեղեկացնի նրանց մանկավարժական դաստիարակչական ներգործության մասին:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը որոշվում է երեխաների ֆիզիկական զարգացման, առողջության, ֆիզիկական պատրաստվածության ցուցանիշներով, առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությամբ, ծրագրին համապատասխան սովորողների ձեռքբերումների մակարդակով, սովորողների մոտ մարդասիրական արժեքային կողմնորոշումների դաստիարակմամբ, վերջին երեք տարիների արդյունքների դինամիկայով, համայն-քային, քաղաքային, մարզային մրցումների հաղթողների առկայությամբ:

Ֆիզիկական դաստիարակության մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման պայմաններն են.

- ընթացիկ և հեռանկարային պլանավորումը,
- նյութատեխնիկական բազայի համալրվածությունը,
- ֆիզիկական կուլտուրայի և և առողջ ապրելակերպի վերաբերյալ գիտելիքների տարածումը,
- ոչ ստանդարտ սարքավորումների առկայությունը,
- հատուկ բժշկական խմբերի առկայություն,
- ֆիզիկական կուլտուրայի խմբակների, սեկցիոն խմբերի առկայությունը,
- ֆիզկուլտուրային ակտիվի սիստեմատիկ պատրաստումը,
- մասնագիտական կողմնորոշումը,
- սպորտայնացված դասերի անցկացնումը,

- դպրոցի բազայի հիման վրա ֆիզկուլտուրային ուսումնական հաստատությունների ուսանողների մանկավարժական պրակտիկայի կազմակերպում,
- դպրոցի մարզական փառքի թանգարանի կազմակերպում:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը իր մասնագիտական գործունեության ընթացքում պետք է ճիշտ հասկանա և հաշվառի սովորողների ֆիզկուլտուրային-մարզական գործունեության նկատմամբ դրդապատճառները, հետաքրքրությունները: Խորը գիտելիքները, վարպետությունը, կամքը, զսպվածությունը, հանգստությունը, վստահությունը ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին օգնում են հաջող լուծել առաջադրված խնդիրները: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին հարկ է լինում սովորողներին դաստիարակել դժվարությունները հաղթահարելու ոգով, նրանց տանել «պարզից դեպի բարդ», «յուրացվածից չյուրացված» ճանապարհով, այսինքն սովորողների առաջ անընդհատ ստեղծել ինքնակատարելագործման ձգտման հեռանկարային ուղղությունների համակարգ:

Դասավանդման վարպետությունը բնութագրվում է այնպիսի գործոններով, ինչպիսին է ստեղծագործելը, հնարամտությունը, ինքնատիրապետումը, իր առարկայի և դաստիարակչական աշխատանքի մեթոդները իմացությունը: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը միշտ գործ է ունենում երեխայի ներաշխարհի, նրա աշխարհայացքի, մտքերի, ցանկությունների և հույսերի, նրա դառնությունների և ուրախությունների հետ: Անկախ իր անձնական փորձից, տաղանդից, գիտելիքներից մանկավարժը հետք է թողնում երեխայի հոգում և գիտակցության մեջ: Ոմանց մոտ այդ հետքը մնում է շատ վառ, նրանք ընդօրինակում են ուսուցչին և վերջին հաշվով ձգտում են գնալ նրա հետքերով: Մյուսներին մանկավարժը օգնում է ամրապնդել առողջությունը, օգնում է խորհրդով՝ որ ուղղությամբ շարունակել կրթությունը, ինչ մասնագիտություն ձեռք բերել, իսկ սա նույնպես հետք է թողնում աշակերտների հոգում և գիտակցության մեջ:

Ֆիզիկական կուլտուրայի դասերի և մարզական պարապմունքների ընթացքում մանկավարժն անընդհատ ուշադրություն է դարձնում դահլիճում սովորողների պահվածքին, հասակակիցների, իրենից ավագների, ծնողների հետ փոխհարաբերություններին: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը քրտնաջան, սիստեմատիկ աշխատանքի ճանապարհով սովորողներից հետամուտ է լինում մարզական համազգեստի կարգ ու կանոնի, մարզադահլիճում, հանդերձարաններում, լոգարաններում, զուգարաններում մաքրության պահպանման: Փորձը ցույց է տալիս, որ դաստիարակության, այդ թվում և ֆիզիկական դաստիարակության հետ, կապված են այնպիսի հասկացություններ, ինչպես՝ «բարություն», «սրտակցություն», «նրբազգացություն», «ուշադրություն», «սովորողների նկատմամբ անհատական մոտեցում», որոնք պետք է զուգակցվեն դաստիարակվողների նկատմամբ

խստությամբ, պահանջկոտությամբ: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն իր աշխատանքի նկատմամբ առանց խորասուզման, հավատարմության, առանց անընդհատ ստեղծագործական փնտրտուքների, նպատակասլացության, համարձակության, նորարարության երբեք չի ունենա հեղինակություն և սովորողների սերը, նրանց խորը անկեղծ հարգանքը:

Մանկավարժի պարտականությունների շրջանակը բազմազան է. նա պետք է ուսումնական և մարզական գործընթացը ապահովի մարզական համազգեստով, մարզագույքով, սարքավորումներով, զբաղվի մարզաբազայի վերանորոգմամբ, գումար հայթայթի մարզագույքի ձեռքբերման համար, մեկնի գործուղումների՝ մրցումների, զբաղվի գրենական պիտույքների գնմամբ: Այս հարցերի հաջող լուծման գործում էական դեր են խաղում կազմակերպչի անձնական որակները, նրա կարողությունը կապեր հաստատել ղեկավար կազմակերպությունների, ինչպես նաև այլ դպրոցների և հաստատությունների կոլեգաների և մասնագետների հետ:

Մանկավարժը որպեսզի գտնվի ժամանակի պահանջներին համապատասխան մակարդակի վրա, պետք է անընդհատ հետևի նոր մասնագիտական գրականությանը, պարբերական լույս տեսնող տպագրությանը, դիտի մարզական հաղորդումներ, ուսումնասիրի իր կոլեգաների պրակտիկ առաջավոր փորձը:

«Մանկավարժական տաղանդ» հասկացությունը իր մեջ ներառում է այնպիսի մասնագիտական կարողություններ, ինչպիսիք են պահանջկոտության և խրախուսման չափի զգացումը, սովորողների հետ բարդ փոխհարաբերությունների համակարգում ինտուիցիայի և նրբազգացության դրսևորումը, մանկավարժական դիտողականությունը (մանկավարժի կարողությունն առանձին փաստերով և աշակերտի պահվածքով կանխատեսել նրա զարգացումը), մանկավարժական բարձր վարպետությունը, այսինքն իր առարկայի մասին գիտելիքների փոխանցման միջոցների կատարյալ տիրապետումը: Բազմաթիվ դիտումները և հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորողների տեսական պատրաստության և նրանց մոտ կայուն հմտություններ և ֆիզիկական վարժություններով ինքնուրույն պարապմունքների նկատմամբ սովորության ձևավորման հարցում գոյություն ունեն դեռևս չօգտագործված պահուստներ: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի պարտքն է երեխաներին սովորեցնել ինքնուրույն կատարել առավոտյան մարմնամարզություն, անցկացնել նախավարժանք, մարզախաղեր, ընդ որում ոչ միայն միայնակ, այլև ընկերների, համադասարանցիների հետ: Դա մանկավարժի հեռանկարային խնդիրներից մեկն է: Դրա լուծման համար նա պետք է ներգրավի ծնողներին՝ նրանց համար անցկացնելով տարբեր մեթոդական պարապմունքներ և ֆիզիկական կուլտուրայի ու մարզական պարապմունքի բաց դասեր: Երկրորդ, ոչ պակաս կարևոր, մարզական խնդիր է հանդիսանում ծնողների պատ-

բաստումը տնային պայմաններում ֆիզիկական վարժությունների կատարման համար: Մեր երկարատև հետազոտությունները ցույց են տալիս, որ ծնողների կեսից ավելին կարող են տեղաշարժվել դահուկներով, սահել չմուշկներով, հեծանիվ վարել, խաղալ որևէ մարզախաղ կամ շարժախաղ և այլն: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է գիտենա դրա մասին և ծնողներին զինի ֆիզիկուլտուրային-մարզական պարապմունքների անցկացման մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներով՝ երեխայի տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ:

Որպեսզի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչն երեխաների մոտ հեղինակություն վայելի, պետք է անընդհատ հետևի իրեն, իր շարժուձևին, խոսքին, «չճնշի» իր գիտելիքներով, այլ հաճույքով փոխանցի սովորողներին: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի խոսքը պետք է լինի պատկերավոր և հասկանալի սովորողներին: Տերմինաբանության իմացությունը, դրա ըմբռնումը և կիրառումը սովորողներին օգնում է ավելի արագ յուրացնել ուսումնական նյութը, ուսուցչի բացատրությունները նրանց համար դառնում է հասկանելի, պարզ և հասանելի:

Մանկավարժական վարպետությունը բնածին որակ չէ, այն ձեռք է բերվում աշխատանքի ընթացքում: Ֆիզիկական կուլտուրայի դասերի, մարզական պարապ-մունքների և մրցումների, սովորողների հետ հաղորդակցման ընթացքում, այլ մարզական-մասսայական միջոցառումների անցկացման ժամանակ ուսուցչի մոտ կազմավորվում է հաղորդակցման երկու հուզական բևեռ: Նա պետք է անընդհատ հիշի, որ իրական դաստիարակչական արդյունք ձեռք է բերվում այն դեպքում, երբ հաջողվում է կառուցել փոխհարաբերություններ, որոնք հիմնված են դրական հույզերի վրա: Ուսուցիչը և աշակերտը կազմում են միասնական համակարգ՝ միավորված ընդհանուր նպատակով. ուսուցիչը փոխանցում է գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, իսկ աշակերտը ֆիզիկական կուլտուրայի դասերի, սեկցիոն պարապմունքների, մրցումների ընթացքում յուրացնում և ամ-րապնդում է դրանք, այսինքն տեղի է ունենում տեղեկատվության փոխանակում, փոխհարաբերությունների ստեղծում, երեխայի անհատականության ճանաչում:

Մանկավարժը պահպանում է համակարգի ամբողջականությունը հաղորդակցման այնպիսի տարրերի կիրառման հաշվին, ինչպիսիք են սովորողներին ուղիղ, անուղղակի և միջնորդավորված դիմելը:

Ուղիղ պահանջը բնութագրվում է առաջադրանքի կոնկրետությամբ, հրա-հանգների լակոնիկությամբ, սովորողներին դիմելու զուսպ, գործնական տոնով և աշակերտների անհրաժեշտ գործողությունների խիստ հաջորդականությամբ:

Անուղղակի հաղորդակցման ձևերը բազմազան են. խնդրանք, վստահություն, խրախուսում: Սովորողներին դիմելու այս ձևերը իրենց հիմքում ունեն ուսուցչի կողմից աշակերտներին և նրանց գործունեության նկատմամբ դրական վերաբերմունքի ինքնատիպ ցուցադրում:

Ուսուցչի դիմելը սովորողներին կարող է արտահայտվել և բացասական բնույթ կրող այլ ձևերով, օրինակ՝ անվստահություն, կշտամբանք ինչպես ուսուցչի, այնպես էլ ընկերների կողմից: Օրինակ, տեսնելով աշակերտի ընկերների հետ մեծամիտ պահվածքը, ուսուցիչը ասում է. «Թիմի հետ քեզ վատ ես պահում: Տղերքը դադարում են քեզ հարգել: Այսպիսի վերաբերմունքով քեզ դժվար կլինի թիմ մտնել»: Այսպիսի բառերը դրական են ազդում սովորողների վրա:

Մանկավարժական տակտը ուսուցչի կողմից գործունեության բազմազան ոլորտներում երեխաների հետ հաղորդակցման ժամանակ չափի զգացման պահպանումն է, կարողությունը սովորողների նկատմամբ ընտրել ճիշտ մոտեցում՝ նրանց հետ դաստիարակչական հարաբերությունների համակարգում: Ուսուցչի մանկավարժական տակտը հիմնված է բարոյականության համամարդկային սկզբունքների վրա: Տակտի մասնագիտական էությունը ամփոփվում է մանկավարժի յուրահատուկ գործունեության մեջ, ով պարտավոր է ազդել երեխայի ներաշխարհի վրա, կարող է հաղորդակցվել նրա հետ, ներկայացնել, երբ դա անհրաժեշտ է, մանկավարժական պահանջներ, օժանդակել բարոյական վերաբերմունքի ձևավորմանը և դատապարտել դաստիարակչական նպատակներին հակասող արարքները: Մանկավարժական գործունեության մեջ տակտը որոշվում է ոչ միայն մանկավարժի՝ երեխայի հետ կոնֆլիկտից խուսափելու կարողությամբ, այլև կարողությամբ, եթե պետք է, գնալու այդ կոնֆլիկտին, ճիշտ լուծել ցանկացած առաջ եկած հակասություն:

Հոգեբանական տեսանկյունից՝ տակտի էության առավել իմաստավորված ըմբռնման, պրակտիկ գործունեության մեջ դրա կիրառման մանկավարժական նպատակահարմարության համար պետք է դիմել էմպատիային: Էմպատիան հուզական վիճակի ձեռքբերումն է, այլ մարդու ապրումներում խորամուխ լինելը: Էմպատիկ կարողությունը, որպես կանոն, աճում է կյանքի փորձի հետ: Էմպատիան ավելի հեշտ է իրագործվում սուբյեկտների վարվելաձևի և հուզական ռեակցիաների նմանության դեպքում:

Շարադրենք էմպատիկ տերմինները, որոնք կազմում են մանկավարժական տակտի հիմքը:

Դրական վերաբերմունք՝ համախմբման հմտությունների հետ ներգործության հմտությունների կիրառում, ձգտում աշակերտների հետ կիսել սեփական փորձը, բայց միշտ փոխանցել այն, ինչ աշակերտը կարող է ընկալել:

Հարգանք՝ աշակերտի մասին բացառիկ, դրական արձագանքներ և նրա առաջընթացի խրախուսում: Եթե ձեր հետ գոյություն ունեն մեծ տարաձայնություններ, անհրաժեշտ է բաց և ազնիվ խոստովանում, հոնդուրժողականություն նրանց նկատմամբ:

Ջերմություն՝ կիրառելով հիմնականում ոչ բանավոր միջոցներ՝ տոն, դադար, դեմքի արտահայտություն, արտահայտել հոգատարությունն աշակերտի նկատմամբ: Ժպիտը հատկապես կարևոր է ջերմ մթնոլորտի ստեղծման համար:

Կոնկրետություն՝ լինել հստակ, պարզաբանել մասնիկները, փաստերը, զգացմունքները:

Առերեսում՝ զրույցը անցկացնել բաց, բանավոր և ոչ բանավոր պահվածքում ի հայտ բերել խառը հաղորդագրություններ, անհամապատասխանություններ, հակասություններ:

Անկեղծություն՝ լինել այնպիսին ինչպիսին, կլինես քո յուրայինների դեպքում: Ուրիշների նկատմամբ լինել ուշադիր սովորողների կարիքների և նրանց հնարավորությունների նկատմամբ՝ մնալով ինչպիսին կաս:

Կուլտուրական էմպատիա՝ գիտակցել, որ ուսուցչի կուլտուրական ոճը տարբերվում է աշակերտի ոճից:

Եվ այսպես, դրական վերաբերմունքը, հարգանքը և ջերմությունը, կոնկրետությունը, անկեղծությունը և նույնականությունը, հակադրությունը հասկացությունները, ամբողջությամբ վերցրած՝ կազմում են էմպատիայի հիմնական պայմանները: Հենց այս մասում ներկայումս գոյություն ունեն մեծ հիմնախնդիրներ: Ամռան նախօրեին գաղափարակայնության սկզբունքի շուրջ կառուցվում էր ամբողջ դպրոցական դաստիարակչական աշխատանքը: Քաղաքական ասպարեզում կրքերը փոթորկվում են և շատ մանկավարժների համար պարզ չէ՝ ինչպես դաստիարակել աճող սերնդին:

Մեր կարծիքով, անփոփոխ են մնում երիտասարդ սերնդի մոտ ընտանիքում, դպրոցում, փողոցում, հասարակական վայրերում, տրանսպորտում, մարզադահլիճում պահվածքի նորմերի, ավագների, սահմանափակ հնարավորություններով մարդկանց նկատմամբ հարգանքի ձևավորման սկզբունքները: Տեսանելի ապագայում երախաների մեջ հոգևոր արժեքների և բարոյականության դաստիարակումը հանրակրթական դպրոցի և ուրիշ ուսումնական հաստատությունների գլխավոր խնդիրներից մեկն է: Ենթադրվում է, որ մի հարկի տակ կգտնվեն հանրակրթական, սպորտային, երաժշտական և արվեստի դպրոցները: «Ֆիզիկական կուլտուրա» առարկան կանցկացվի ամեն օր, քանի որ պետությանը պետք կլինեն առողջ մարդիկ: Իսկ ներկայումս դեռևս բացակայում է առողջ մարդկանց պետության պատվերը:

Երեխաների ֆիզիկական կուլտուրայի առաջին տեսաբաններից մեկը՝ քահանա Եպիֆանի Սլավինեցկին, շաղկապում էր ֆիզիկական վարժություններով պարապմունքների և խաղերի պրակտիկան երեխայի մտավոր դաստիարակության, նրա մտածողության զարգացման հետ: Նա գտնում էր, որ խաղի հիմնական նշանակությունը լավ տրամադրության ստեղծումն է, մտավոր հոգնածությունից «պաշտպա-

նելը», խելամիտ հանգիստը: Միաժամանակ խաղը երեխաների մոտ պետք է զարգացնի հնարամտություն, ճարպկություն և ուժ, ստեղծագործելու ձգտում և հարգանք միմյանց նկատմամբ, կարողություն տանելու կյանքի դժվարությունները և ֆիզիկական տանջանքները:

Ֆիզիկական կուլտուրան և սպորտը սովորողների վրա թողնում են բազմակողմանի ազդեցություն: Շատերի համար ֆիզկուլտուրային-մարզական գործունեությունը միակ հնարավորությունն է առողջությունը վերականգնելու, ֆիզիկական զարգացման մեջ եղած շեղումները հաղթահարելու համար:

Այո, առողջ լինելու համար, անհրաժեշտ են ռեժիմ, սահմանափակումներ, սիստեմատիկ ֆիզիկական բեռնվածություններ, հիգիենիկ նորմերի պարտադիր պահպանում, կոփման միջոցների կիրառում և այլն: Դրա համար պետք է կամք, զսպվածություն, համբերություն: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի խնդիրն է դասերին և մարզական պարապմունքներին տալ մարդու մարմնի գեղեցկության և օրգանիզմի զարմանալի հնարավորությունների մասին զգայական, կոնկրետ պատկերացում: Ամենատարբեր նյութերը՝ արվեստի գործերը, գովազդը, նկարները, անցյալի և ներկայի մարզիկների կենսագրությունը կարող են օգնության գալ ուսուցչին և մարզչին, եթե նրանք ճիշտ են գիտակցում իրենց դաստիարակչական գործառույթները: Մարզական պարապմունքներին կարևոր է բացահայտել գործողությունների գեղեցկությունը և արտահայտչականությունը, վարժություններին տալ գեղագիտական գունավորում, արթնացնել ստեղծագործական ազդակ, երևակայություն, ուղղորդել նրանց գտնելու շարժումների և դրանց համակցումների առավել ներդաշնակ կառուցման ձևեր: Գեղեցկության նպատակահարմարության բացահայտումը սպորտային վարպետության կատարելագործման ուժեղագույն գեղագիտական խթանն է: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչից պահանջվում է ոչ միայն կարողություն զգալու ֆիզիկական վարժությունների գեղագիտական կողմը, այլև կարողություն՝ բացելու այն սովորողների առաջ: Այստեղ դրսևորվում է մանկավարժի յուրահատուկ տաղանդը և, իհարկե, համապատասխան գեղարվեստական-գեղագիտական կուլտուրան: Այս դեպքում ուսուցչին օգնության կարող է գալ արվեստը. երաժշտական, պլաստիկ զուգորդությունների լայն սպեկտրը կօգնի տալ ցանկալի գործողության, արդյունքի զգայական շոշափելի պատկերը: Պարապմունքներին կիրառվող երաժշտությունը կարող է և պետք է հանդես գա ոչ միայն գործողությունների ռիթմիկ կազմակերպման ֆունկցիոնալ նշանակությամբ, այլև իր գեղագիտական, գեղարվեստական բովանդակությամբ: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը դասերի և մարզական պարապմունքների ընթացքում դպրոցականներին սովորեցնում է ձևավորել իրեն, տալիս է իրենց մարմնի տիրապետման մեխանիզմների մասին գիտելիքներ, սովորեցնում է զգալ կատարվող վարժությունները և ղեկավարել դրանք: Հարկ է ուշադրություն դարձնել ներքին գիտակցական

կենտրոնացմանը, յուրաքանչյուր աշակերտի ֆիզիկական վարժությունների իմաստի մեջ խորամուխ լինելուն: Պետք է երեխայի մոտ արթնացնել իր մեջ գեղեցկության ստեղծման, կատարելագործման պահանջմունք:

Հ.Ա. Բաբայանը, Վ.Վ. Բելոռուսովան, Ն.Գ. Կոլցովան, Ն.Ի. Պոնոմարևովը, Ա. Ֆրենկինը և այլոք, հետազոտելով ֆիզիկական և գեղագիտական դաստիարակության կապը, նշում են, որ այն պետք է իրականացվի տարբեր միջոցներով մարդու տարիքային զարգացման բոլոր փուլերում: Ֆիզիկական դաստիարակության ոլորտում գեղագիտական ճաշակ կարող են դաստիարակել հետևյալ վարժությունները և միջոցառումները.

1. Շարժումների հիմնական ձևերը (քայլք, վազք, ցատկեր, նետումներ, մագլցում, հավասարակշռության վարժություններ),
2. Ընդհանուր զարգացնող վարժություններ (առարկաներով և առանց առարկաների, ճիշտ կեցվածք ձևավորող),
3. Խաղեր (ստեղծագործական, երգելով, ազգային),
4. Արվեստի տեսակներ (երաժշտություն, պարի տարրեր, ֆոլկլոր),
5. Պարապմունքների գեղագիտական պայմաններ,
6. Շփում բնության հետ,
7. Ուսուցչի կողմից վարժությունների օրինակելի ցուցադրում:

Անհատի գեղագիտական որակների ձևավորումն անհնար է զարգացնել առանց բարոյական որակների, հոգևոր արժեքների դաստիարակման: Որպեսզի մշակել ուժ, ճարպկություն, գեղեցիկ կազմվածք, անհրաժեշտ է ցուցաբերել կամային ճիգեր, համբերություն, արիություն: Սպորտային ոգին ոչ միայն փառասիրական ոգևորություն է, այլև, անկասկած՝ սուտը, ստորությունը, կոպտությունը, դավաճանությունը բացառող սպորտային պահվածք:

Այստեղ սպորտի բարոյականությունը և գեղագիտությունը շաղկապվում են: Ոչ մարզական պահվածքը, անկարգ արարքները անկասկած պետք է կրեն նաև գեղագիտական գունավորում: Ապագայում ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է լուծի հետևյալ խնդիրները. դաստիարակել գեղեցիկը ընկալելու զգացում, գեղեցիկ մարմնակազմության ձևավորում, բարոյական պահվածքի դաստիարակում, ստեղծագործական ակտիվության դաստիարակում: 21-րդ դարում այս խնդիրների լուծումը հաջող կընթանա, եթե հանրակրթական դպրոցներն ապահովվեն լիարժեք ռեսուրսներով, կադրերով, ուսումնական ծրագրերով, բազայով, արդյունավետ ղեկավարմամբ: Ներկայումս հանրակրթական դպրոցը հանդիսանում է հիմնական սոցիալական ինստիտուտը, որտեղ տեղի է ունենում աճող սերնդի դաստիարակումը: 12-ամյա կրթության պայմաններում այս հիմնախնդիրը էլ ավելի սուր է դրվում: Հանրակրթական դպրոցը կադրեր է մատակարարում արտադրության և գյուղատնտեսության, բանակի, ԲՈՒՀ-երի, քոլեջների համար,

մարզական տեսանկյունից դպրոցը հերթափոխ է պատրաստում ՄՊՄԴ-ի, ՕՀՄՊՄԴ, հավաքական թիմերի համար, սերտ կապ ունի ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, երիտասարդական պալատների, մանկական ակումբների հետ, այսինքն հանրակրթական դպրոցը այլ սոցիալական ինստիտուտների մեջ հանդիսանում է հիմնական օղակը և հմուտ ղեկավարման դեպքում այն կարող է պատրաստել մեր երկրի լիարժեք քաղաքացիներ: Այս տեսանկյունից պետք է վերանայել դպրոցի աշխատանքի գնահատականը: Պետությունը պետք է առողջ, ներդաշնակ զարգացած շրջանավարտների «պատվեր» տա՝ ներդնելով համապատասխան միջոցներ պատրաստության համար, այսինքն պետք է դպրոցից «գնի» աշխատուժ՝ արտադրության, գյուղատնտեսության, բանակում ծառալելու, ԲՈՒՀ-եր ընդունվելու և այլնի համար:

Կոմպետենտային կրթության հենքում ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական մոդելում առանձնացրել ենք հետևյալ կոմպետենտությունները՝ առանցքային, բազային և հատուկ, որոնք էլ իրենց հերթին բովանդակում են տարբեր կոմպետենցիաներ.

I. Առանցքային կոմպետենտություն

ա) Սոցիալ-անհատական կոմպետենցիաներ.

1. Սիրել աշակերտներին: Ամեն մարդ ինքը երեխա է եղել: Եթե աշակերտին մոտենանք սիրով և կարեկցությամբ, ապա նա կսիրի մեզ, կներգրավվի մեր գործունեության մեջ, կգործի մեր կողմնորոշման ուղղությամբ և այդպիսով ժամանակի ընթացքում կկատարելագործվի: Ինչպես նշել է Վ.Ա. Սուխոմլինսկին. «Միայն նա կդառնա իսկական ուսուցիչ, ով չի մոռանում, որ ինքնել է երեխա եղել»: Ինչպես նաև իր հերթին նշում է, որ երեխայի մտքին տիրանալու համար պետք է առաջին հերթին նվաճել նրա սիրտը: Մենք գտնում ենք՝ կորևոր է, որպեսզի երեխան վախենա ոչ թե պատժից, այլ ուսուցչի սերը կորցնելուց:
2. Ունենալ համբերություն և չշտապել աշակերտների առջև դրված նպատակների ձեռքբերման ճանապարհին:
3. Ուսուցչին անհրաժեշտ է լինել տոլերանտ և գործել շրջահայացորեն:
4. Ուսուցիչը պարտավոր է սիրել իր մասնագիտությունը: Ալի Էրկան Կավկալին նշում է հետևյալը. «Դասավանդման գործունեության մեջ շատ կարևոր է դասարանում ունենալ հեղինակություն: Որքան կարևոր է ջուրը ձկան համար, այնքան էլ ուսուցման և կրթության մեջ կարևոր է հեղինակությունը: Եթե ուսուցիչը չի կարող դասարանում ապահովել հանդարտություն, ապա նա չի կարող անցկացնել դասը: Իսկ հեղինակության ձեռքբերման ամենալավ միջոցը իր գործը լավ իմանալ է, աշակերտներին և իր մասնագիտությունը սիրելը»:
5. Կարողանալ պահպանել սեփական արժանապատվությունը՝ պահպանելով գիտության պատիվը: Դա նա կարող է ապահովել հետևյալ ձևով. զերծ մնալ տգեղ

արարքներից, զբաղվել օգտակար գործերով, բավարարվել իր ֆինանսական վիճակով, պահպանել իր անձը ղեկավարության ճնշումներից, գործել զգույշ և համբերատար յուրաքանչյուր իրավիճակում:

6. Կարողություն՝ արդյունավետ գործելու աշխատանքային գործունեության ընթացքում:
7. Կարողություն՝ սեփական նախաձեռնությամբ իր վրա վերցնելու պատասխանատվությունը (խաղային մարզաձևերում ոչ ստանդարտ իրավիճակներում իր վրա վերցնել թիմի առաջնորդի դերը):
8. Առողջ ապրելակերպի գիտակցումը և նորմերի իմացությունը (հասկացումը)՝ ներառած կախվածությունների կանխարգելման հարցերը, կարողությունը կիրառելու ֆիզիկական կուլտուրայի միջոցները աշխատունակության օպտիմալացման համար:
9. Կարողություն կառուցելու միջանձնային հարաբերություններ և աշխատելու խմբում:
10. Ինքնուրույն աշխատանքի պատրաստություն, կարողություն՝ ղեկավարելու իր ժամանակը, պլանավորելու և կազմակերպելու գործունեությունը:
11. Անընդհատ ինքնակատարելագործվելու պատրաստություն, կարողություն՝ կառուցելու (մշակելու) անհատական և մասնագիտական զարգացման ու կրթության (ուսուցման) ռազմավարություն:

բ) **Ընդհանուր մշակույթային կոմպետենցիաներ.** կարողություն՝ ապրելու և գործելու բազմամշակույթ հասարակության մեջ, մարդկանց իրավունքների և ազատության հարգում, կարողություն՝ ընտրելու ազատ ժամանակի օգտագործման ձևեր և միջոցները, մարդկային արժանապատվության հարգում:

գ) **Հաղորդակցական կոմպետենցիաներ**. կարողություն՝ պարապմունքների ընթացքում ստեղծել բարենպաստ և հուզական մթնոլորտ, կարողություն՝ հաստատելու մանկավարժության տեսանկյունից նպատակահարման հարաբերություններ աշակերտների հետ, տիրապետել ճիշտ, գրագետ խոսքի:

դ) **Տեղեկատվական կոմպետենցիաներ.** որակյալ օգտագործողի մակարդակով տիրապետել, կարողանալ կիրառել տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաները մասնագիտական գործունեության մեջ:

ե) **Ռեֆլեքսային կոմպետենցիաներ.** սեփական գործունեության վերլուծություն, իր կարողությունների, մասնագիտական գործողությունների գնահատում և վերագնահատում, աշակերտների հետ աշխատանքում սեփական հնարավորությունների կանխատեսում, կարողություն ինքնուրույն աշխատելու առանց անընդհատ ղեկավարության (դա կարող է արտահայտվել ֆիզիկական կուլտուրայի դասերին, դահուկաքայլքերի, երկար տարածության վազքերի, լողի ժամանակ):

II. Բազային կոմպետենտություն

ա) Մասնագիտական կոմպետենցիաներ.

1. Ուսուցիչը, աշակերտներին որևէ բան բացատրելով, առաջին հերթին ինքը պետք է մարմնավորի և գիտակցի այն, ինչ բացատրում է:
2. Ուսուցչի կարողությունը պարապմունքը անցկացնել այնպես, որպեսզի իր դասը սիրեն, այլ ոչ թե վախենան իրենից:
3. Ուսուցիչը պետք է պատրաստ լինի յուրաքանչյուր պարապմունքի: Այսինքն, յուրաքանչյուր դասից առաջ պետք է հետազոտել և ուսումնասիրել ոչ միայն կոնկրետ առարկան, այլև մտավոր և հոգեբանական ապացույցները: Որովհետև աշակերտի համոզման գործընթացը ուսուցման և դաստիարակության հիմնական մեթոդն է, քանի որ մարդիկ ավելի շատ հակված են անթույլատրելիին, քան օգտակարին:
4. Ուսուցչի հույս տալու կարողությունը՝ ամրապնդելով այն կոնկրետ փաստարկներով. իմանալ այն մասին, որ ինչպես օդը և սնունդը հանդիսանում են անհրաժեշտ օրգանիզմի համար, այպես էլ հույսը հանդիսանում է անհրաժեշտ հոգու համար: Յուրաքանչյուր մարդու համար ամենամոտ ընկերը հույսն է, իսկ ոխերիմ թշնամին՝ անհուսությունը:
5. Կարողանալ պատմելով չձանձրացնել, ավելի լավ է խոսել քիչ, բայց ըստ էության:
6. Կարողություն՝ հուսադրելու, ոգևորելու, սպառնալու և նախազգուշացնելու: Խրախուսանքի և նախազգուշացման արժեքի (նշանակության) իմացություն, դրանց ներդաշնակ կիրառում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այդ միջոցների կիրառման սկզբունքներին: Հակառակ դեպքում կանոնակարգվածության դեպքում կստանանք անկանոնություն, իսկ սպասվող բարելավման փոխարեն՝ վատացում: Այսինքն, ցույց տալով աշակերտին իր սխալը՝ չպետք է վիրավորել նրան, հատկապես այլ մարդկանց ներկայությամբ, որպեսզի չճնշես սեփական արժանապատվության զգացումը, այլ օժանդակես նրա հետագա զարգացմանը: Եթե խորհուրդը չի ընդունվել, ապա կարելի է այլ մարդկանց ներկայությամբ զգուշացնել կամ պատժել նրան:
7. Կարողություն՝ որոշելու գերակայությունները, իրականացնել իրավիճակային վերլուծություն:
8. Կարողություն՝ ընդհանրացնելու արդյունքները, բացահայտելու սխալները, հստակ կարգավորելու պլանները:
9. Կարողություն՝ դիմակայելու անվստահությանը և անորոշությանը:

բ) **Կազմակերպչական կոմպետենցիաներ.** կարողանալ կազմակերպել կրթական և սոցիալմանկավարժական գործունեություն, կարողություն՝ իրականացնելու հսկողություն անհատական ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության, ֆիզիկական աշխատունակության, կեցվածքի նկատմամբ, հիմնական

ղեկավարման գործառույթների և դրանց իրականացման մեթոդների տիրապետում (որոշումների ընդունում, կազմակերպում, հիմնավորում, հսկում):

գ) **Ընդհանուր մանկավարժական կոմպետենցիաներ**. կարողություն՝ տարբերելու (բաժանելու) բարու, արդարության, պատվի և տոլերանտության վրա հիմնված արժեքները և նորմերը, պատրաստություն կրթական հաստատությունում ամբողջական մանկավարժական գործընթացի կազմակերպմանը: Օրինակ, խաղային մարզաձևերում նկատել պրոբլեմները և փնտրել դրանց լուծման ուղիները. տակտիկական և հոգեբանական պրոբլեմներ, գիտամանկավարժական հետազոտությունների մեթոդների տիրապետում, կարողություն՝ բնութագրելու ֆիզիկական և հոգեբանական զարգացման անհատական առանձնահատկությունները և դրանց կապը ֆիզիկական վարժություններով սիստեմատիկ պարապմունքների հետ, կարողություն՝ գտնելու օպտիմալ միջոցներ ուսումնադաստիարակչական գործընթացի ժամանակ, կարողություն ճիշտ ախտորոշելու մանկավարժական երևույթները:

գ) **Առարկայական-կողմնորոշիչ կոմպետենցիաներ.** կարողանալ կազմակերպել ուսումնաճանաչողական գործունեություն՝ համապատասխան սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների: Օրինակ՝ քայլք, քայլք դահուկների վրա, ընդհանուր զարգացնող մարմնամարզություն, լող, առողջության դասեր, կարողություն իրականացնել ապահովման և ինքնաապահովման հնարքներ ֆիզիկական վարժություններով պարապմունքների, առաջին օգնության ցուցաբերման հնարքներ վնասվածքների ժամանակ, անվտանգության տեխնիկայի կանոնների իմացություն, շարժողական գործունեության բժշկակենսաբանակ հիմունքների գիտելիքներ իմացություն:

III. Հատուկ կոմպետենտություն

ա) Դիագնոստիկական կոմպետենցիաներ. տիրապետել ուսանողի անհատականության դիագնոստիկայի հոգեբանա-մանկավարժական մեթոդիկային, կարողություն՝ գնահատելու աշակերտների նախնական, ընթացիկ և հանրագումարային գիտելիքների ու կարողությունների մակարդակը, կարողություն՝ գնահատելու խմբում մանկավարժական իրավիճակը, կամ որոշելու ուսանողների մասնագիտական դաստիարակվածության մակարդակը:

բ) Ծրագրավորման կոմպետենցիաներ. կարողություն՝ առաջադրելու մանկավարժական խնդիր, որոշելու դրանց իրականացման պայմանները, կարողություն՝ պլանավորելու իր ուսումնական, գիտահետազոտական կամ դաստիարակչական աշխատանքները, կարողանալ առաջադրել, հստակ ձևակերպել կոնկրետ նպատակներ և մանկավարժական գործունեության խնդիրներ:

գ) Կառուցվածքային կոմպետենցիաներ. կարողություն՝ կազմակերպելու և ղեկավարելու մարզական պարապմունքներ, կարողություն ճիշտ ընտրելու կրթության մեթոդներ և տեխնոլոգիաներ, կարողություն ակտիվացնելու աշակերտների ուսումնական գործունեությունը:

դ) Վերլուծական կոմպետենցիաներ. կարողություն՝ վերլուծելու իր և իր գործընկերների աշխատանքի արդյունքները, կարողություն՝ վերլուծելու աշխատանքում կիրառվող մեթոդների արդյունավետությունը: Ինչպես նաև գիտենալ ֆիզիկական վարժություններով պարապմունքների ժամանակ օրգանիզմի հիմնական օրգանների և համակարգերի գործունեության առանձնահատկությունները, ֆիզիկական վարժություններով տարբեր ուղղվածության անհատական պարապմունքների պլանավորման առանձնահատկությունները և դրանց հսկման արդյունավետությունը, շարժողական գործողությունների ուսուցման և ինքնաուսուցման առանձնահատկությունները, ֆիզիկական կուլտուրայի պարապմունքերին շարժողական ընդունակությունների մշակման առանձնահատկությունները, ֆիզիկական վարժությունների տարբեր համակարգերի բովանդակության և ուղղվածության առանձնահատկությունները, դրանց առողջարարական և զարգացնող արդյունավետությունը, ֆիզիկական կուլտուրայի դերը և նշանակությունը հասարակության և մարդու զարգացման գործում, ֆիզիկական դաստիարակության նպատակը և խնդիրները:

Ըստ մշակված ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական մոդելի առաջարկում ենք նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բովանդակությունը (Նկար 1-ում)



Նկար 1. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի **մանկավարժական կոմպետենտության** հիմքը կազմում են.

1. Ընդհանուր մանկավարժական հմտություններ:
2. Հատուկ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են իրականացնել ֆիզկուլտուրային մարզական գործունեություն:

Հաղորդակցական կոմպետենտության հիմքն են կազմում.

1. Հաղոդակցման կանոնների և չափանիշների պահպանման և կիրառման հմտություններ:
2. Միջանձնային հարաբերություններում ինքնուրույն հանդես գալու և երկխոսության բոլոր ձևերի օգտագործման հմտություն:
3. Դպրոցականների գործողությունների դրդապատճառների ընկալման և հաղորդակցման միջոցների ընտրության ներգործության կանխագուշակման հմտություն:

Կազմապերպչական կոմպետենտության հիմքն են կազմում.

1. Դպրոցականների առջև ուսումնական խնդիրների առաջադրման և հետադարձ կապի ստեղծման և կիրառման հմտություն:
2. Բառացի հրամաների վիզուալացման հմտություն, որոնք կուղեկցվեն պարապմունքների օպերատիվ մեկնաբանություններով:

Տեղեկատվական կոմպետենտության հիմքն են կազմում.

1. Ֆիզիկական կուլտուրայի դասի խնդիրներին համապատասխան միջոցների և մեթոդների ընտրության հմտություն:
2. Մասնագիտական գործընթացում անհրաժեշտ տեղեկատվության որոնում գրական աղբյուրներում և Ինտերնետում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպված սոցիալ մանկավարժական հետազոտության արդյունքները հնարավորություն ընձեռեցին կատարել հետևյալ եզրակացությունները:

1. Գրական, տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչպես նաև գործնական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մասնագիտական գործունեության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությունները ի տարբերություն այլ մասնագետների ոլորտների, համեմատաբար թույլ են ուսումնասիրված և ըստ այդմ՝ անհրաժեշտություն է առաջանում կազմակերպել սոցիալ-մանկավարժական հետազոտություն:
2. Ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի տեղեկատվական հաղորդակցական կոմպետենցիան ժամանակակից ֆիզկուլտուրային կրթության որակի հիմնական չափանիշներից է: Կրթության հումանիզացման պայմաններում նորացվում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բովանդակությունը և կառուցվածքը, փոփոխվում են ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական գործունեության որակի չափանիշները, որին պատրաստ չէ դպրոցական պրակտիկան: Անհրաժեշտ են մանկավարժական-կազմակերպչական և գիտամեթոդական պայմաններ՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի մասնագիտական կոմպետենտության կատարելագործման համար:
3. Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի համապատասխան բաժնի ուսուցման գործընթացի կոմպյուտերիզացումը նշանակալի քայլ է ֆիզկուլտուրային կրթության որակի ապահովման գործում, և բացի այդ, պայմաններ է ստեղծվում աշակերտների հետաքրքրությունների բավարարման համար: Ավելին, տվյալ առարկայի համակարգչային օժանդակումը նպաստում է բարձրացնել ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և առարկայի հեղինակությունը, ընդլայնել դասի ուղեկցումը պատկերազարդ հնարավորություններով, նաև հնարավորություն է ընձեռում դասավանդումը, աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների հսկումը վեր հանել որակական նոր մակարդակի:
4. Դասավանդողի տեղեկատվական և հաղորդակցական կոմպետենցիաների տիրապետումը նպաստում է սովորողի տեղեկատվական-հաղորդակցական կոմպետենտության ձևավորմանը: Ուստի դպրոցում անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ, որպեսզի ուսուցիչը ցանկություն հայտնի և կարողանա կիրառել համակարգիչն իր մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև նախատեստիացիոն վերապատրաստումների ժամանակ լայնորեն կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ: